

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Ցպահանջ ավանդ / Բանկային հաշիվ

(Ֆիզիկական անձի համար)

- Ցպահանջ ավանդի / Բանկային հաշվի (Այտուհետ՝ Ավանդ) ընդհանուր պայմանները.**
  - Ավանդի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը՝ ՀՀ դրամով և Ռ-Ռ ռուբլով հաշիվների համար՝ 1%, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ արժույթով հաշիվների համար՝ 0.01%:
  - Ավանդի արժույթը՝ Բանկի կողմից առաջարկվող ցանկացած արժույթ:
  - Ավանդի նվազագույն գումարը՝ Ֆիզիկական անձանց համար՝ 0:
  - Ավանդի համալրումը՝ առանց գումարի և հաճախականության սահմանափակման:
  - Տոկոսների վճարման հաճախականությունը՝ ամենամսյա /տոկոսագումարները յուրաքանչյուր ամիս գումարվում են ավանդի գումարին/:
  - Տոկոսների հաշվարկ՝ Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կարվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ:
  - Ավանդի բացումը, սպասարկումը, հաշվից կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
  - Ավանդի քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման, հաշվի պահպանման և այլ սակագները սահմանվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
- Այլ պայմաններ և սահմանափակումներ.**
  - Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
  - Ավանդատուն կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել ավանդի գումարը և հաշվեգրված համապատասխան տոկոսագումարները:
  - Բանկը պարտավոր է բանկային հաշվում առկա դրամական միջոցները վերադարձնել Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով:
  - Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, բանկային հաշվի բացման և սպասարկման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
  - Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է:
  - Ավանդը, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայացնում անձը հաստատող կամ փոխարինող փաստաթղթով:
  - Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների դիմաց վճարվող տոկոսների չափը, եթե այլ բան նախատեսված չէ բանկային ավանդի պայմանագրով: Բանկի կողմից ցպահանջ ավանդների համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է մինչև ավանդատուին տոկոսները նվազեցնելու մասին հաղորդումը ներդրված ավանդների նկատմամբ՝ համապատասխան հաղորդման օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
  - Ավանդի պայմանագիրը կորցնելու դեպքում, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Ավանդատուն պարտավոր է 10 (տաս) բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Ավանդատուն կրում է պատասխանատվություն հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
  - Եթե բանկային հաշվում առկա դրամական միջոցների վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային կամ հանգստյան օրվա հետ, սպա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային կամ հանգստյան օրվա հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային կամ հանգստյան օրերի համար վճարելով տոկոսներ:
  - Պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին՝ նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
  - «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել ՀՀ դրամով, ինչպես նաև այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը:
  - Ցպահանջ ավանդային հաշվով կարող են իրականացվել միայն ժամկետային ավանդի ներգրավման, սպասարկման և մարման հետ կապված գործառնություններ:
  - Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ- ավանդատուի հարկային գործակալ, կատարում է զանձումներ համաձայն ՀՀ և ԼՂՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով, ԼՂՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տաս տոկոսի) չափով:**
- Ավանդատուի իրավունքների պաշտպանությունը՝**
  - Ավանդային պայմանագրից բխող բոլոր առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
  - Բանկը պարտավոր է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
  - Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

**4. Երաշխավորված ավանդի չափերը՝**

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժույթային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.

- **եթե ավանդատուն բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տաս միլիոն հայկական դրամ է.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տաս միլիոն հայկական դրամով.**
- **եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդը ամբողջությամբ եւ արտարժույթային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:**

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ:

**5. Տարեկան տոկոսային եկամտաբերություն.**

Տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ ՀՀ դրամով և Ռ-Դ ռուբլով հաշիվների համար՝ 1.0046%, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ արժույթով հաշիվների համար՝ 0.01%

**6. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ.**

**ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՉԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԵ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ (ՊԱՐԶ) ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԳՈՒՔ, ԵԹԵ ՉԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՅ ՄՏԱՅՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՄՔՈՎ:**

- **Տարեկան պարզ տոկոսադրույք՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:**  
Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման բանաձև՝  
 $UQ * S/365 * Op$ , որտեղ՝

UQ - Ներդրված ավանդի գումար,  
S - Տարեկան պարզ տոկոսադրույք,  
Op - ավանդի ներդրման օրերի քանակ՝ հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետը, համաձայն որի Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդ օրը:

**Օրինակ՝**  
Ավանդի ներդրման օրերի քանակ – 365 օր,  
Ներդրված ավանդի գումար – 10.000 ՀՀ դրամ,  
ՀՀ դրամով ավանդի Տարեկան պարզ տոկոսադրույք – 1%

$10.000 * 0.01/365 * 363 = 99.5$  ՀՀ դրամ

- **Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարման կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու /կապիտալացման/ արդյունքում:**

$APY = (1+r/n)^n - 1$ , որտեղ՝  
APY – տարեկան տոկոսային եկամտաբերություն,  
r – տարեկան պարզ տոկոսադրույք,  
n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է,  
Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ամենամսյա է՝ n=12, ապա  
 $APY = (1+0.01/12)^{12} - 1$ ,  
 $APY = 0.010046 * 100 = 1.0046\%$   
Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ժամկետի վերջում է՝ n=1, ապա  
 $APY = (1+0.01/1)^1 - 1$ ,  
 $APY = 0.01 * 100 = 1\%$

**Օրինակ՝**  
**Տվյալ ավանդի պայմանագրով տոկոսների հաշվարկման բանաձև՝ տոկոսների ամենամսյա կապիտալացման կիրառման դեպքում՝**

Ավանդի ներդրման օրերի քանակ – 365 օր,  
Ներդրված ավանդի գումար – 10.000 ՀՀ դրամ,  
Տարեկան տոկոսային եկամտաբերություն – 1.0046%

$10.000 * 0.010046/365 * 363 = 99.9$  ՀՀ դրամ

**7. Այլ տեղեկություններ, Բանկի վերաբերյալ տվյալներ.**

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն  
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64  
Ինտերնետային կայք՝ [www.armbusinessbank.am](http://www.armbusinessbank.am), Էլ. փոստ՝ [info@armbusinessbank.am](mailto:info@armbusinessbank.am)  
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.  
Ճառայությունների գանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Գ-ուի 4-ի:

**Ֆինանսներ բոլորի համար՝ [www.fininfo.am](http://www.fininfo.am) կայքի Ֆինանսական օգնական համակարգ՝**